

մեռնելով՝ Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ դրան քով թաղուեցաւ (կտակը տես Սրուանձտ. Թորոս Աղբար, Ա. էջ 294): Կեսարիա եղած ժամանակ՝ Կեսարիոյ եւ Գերմանիկոյ սահմանին վրայ, Թոմարղայի մօտ մեծածախ կամուրջ մը շինեց, 1621էն մինչ 1632: Ունի նաեւ բազմաթիւ գրութիւններ: (Տես Ակինեան շ. Ներս. ձեռագիր Կենսագրութիւնը Գր. Կեսարացւոյ, որմէ ըստ մասին օգտուեցայ: Տես նաեւ Յանդիմանագիրն Սոյ Սիմէոն Բ. Սեբաստացի կաթողիկոսի առ Փիլիպպ. կթղկս. Էջմիածնի, որուն վրայ քիչ մը վարը, եւ այլն:)

Գրիգոր Վ. Դարանաղցի կամ Կամախեցի (Քեմախցի), «մականուամբ Բուր վերաձայնեալ» (Տաշեան, Ցուց. էջ 410, զոր շ. Ալիշան, Այրարատ էջ 164 եւ 578 յառաջ բերելով՝ սխալմամբ տպած է Բու,) հազիւ քանի մը տարի յառաջ բանասիրացի մերձուստ ծանօթացած է: Ծնած էր 1576ին ի Կամախ, եւ մանուկ հասակէն որբ մնալով՝ խաշնարածութիւն կ'ընէր: 1590ին արեղայ ձեռնադրեցաւ եւ մնաց անուսումն եւ թափառական: 1600ին հաստատուած էր Երեւան, Սաղմոսաց վանքը, ուր երեք տարի բնակեցաւ: 1603ին սկիզբները Երեւան եկած էին Էջմիածնի Դաւիթ, Մելքիսեդ. եւ Աւետիս կաթողիկոսները: Ասոնք զԳրիգոր արեղայ իրենց քով կանչեցին, եւ ըսին՝ թէ կը խորհին իրենք, որ երեքն ալ հրաժարին Էջմիածնի աթոռէն եւ մեծահարուստ Սրապիոն Եդեսացին հրաւիրեն եւ Էջմիածնի կաթողիկոս